Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-536-29.03.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 69-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց օրակարգի հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով ընկերության մասնակիցների համատեղ ներկա գտնվելու՝ հեռակա կարգով քվեարկության (այդ թվում՝ առցանց քվեարկության) միջոցով: Հեռակա կարգով քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կապի՝ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը հավաստող և հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու փաստի հաստատման հնարավորություն տվող միջոցներով փոխանակելու եղանակով:»:

2) 4-րդ մասում «առնվազն 30 օր առաջ» բառերից հետո լրացնել նոր նախադասություն.

«Էլեկտրոնային, հեռատիպային կամ հեռախոսային կապի միջոցներով ժողովի անցկացման քվեարկության դեպքում քվեաթերթիկները (այդ թվում՝ էլեկտրոնային քվեաթերթիկները) պետք է տրամադրվեն բաժնետերերին ժողովի անցկացման պահից առնվազն 7 օր առաջ:»:

3) 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 71-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երրորդ պարբերությունում «անձամբ հանձնելով» բառերից հետո լրացնել «կամ էլեկտրոնային կապի միջոցներով՝ ներառյալ էլեկտրոնային փոստով, ծրագրային և

հավելվածային հարթակներով (ներառյալ բջջային հեռախոսների հավելվածներով), որոնք թույլ են տալիս հավաստիանալ հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու մասին» բառերը.

Հոդված 3. Օրենքի 79-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունում «կամ հանձնվում են անձամբ» բառերից հետո լրացնել «կամ ուղարկվում են էլեկտրոնային կապի միջոցներով՝ ներառյալ էլեկտրոնային փոստով, ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ բջջային հեռախոսների հավելվածներով)» բառերը.

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020 թվականի նոյեմբերի 1-ը Բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով՝ անկախ Ընկերության կանոնադրությամբ նման հանարավորություն նախատեսված լինելու հանգամանքից: Ընդ որում նման նիստի կազմակերպիչը սահմանում է նիստի անցկացման ու քվեարկության ընթացակարգ, որը պետք է ապահովի բաժնետերերի շահերի պաշտպանությունն ու պատշաճ՝ սույն օրենքի դրույթներին համապատասխան քվեարկությունը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 69-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

~~«1. Ժողովի որոշումները կարող են նաև ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով: Ընդ որում, ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ կապի այլ, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:»:~~

«1. Ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց օրակարգի հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով ընկերության մասնակիցների համատեղ ներկա գտնվելու՝ հեռակա կարգով քվեարկության (այդ թվում՝ առցանց քվեարկության) միջոցով: Հեռակա կարգով քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կապի՝ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը հավաստող և հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու փաստի հաստատման հնարավորություն տվող միջոցներով փոխանակելու եղանակով: »:

2) 4-րդ մասում «առնվազն 30 օր առաջ» բառերից հետո լրացնել նոր նախադասություն.

~~«Էլեկտրոնային քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին իրական ժամանակի ռեժիմում հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով ժողովի անցկացման պահից առնվազն 7 օր առաջ:»:~~

«Էլեկտրոնային, հեռատիպային կամ հեռախոսային կապի միջոցներով ժողովի անցկացման քվեարկության դեպքում քվեաթերթիկները (այդ թվում՝ էլեկտրոնային քվեաթերթիկները) պետք է տրամադրվեն բաժնետերերին ժողովի անցկացման պահից առնվազն 7 օր առաջ:»:

3) 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 71-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երրորդ պարբերությունում «անձամբ հանձնելով» բառերից հետո լրացնել «կամ էլեկտրոնային կապի միջոցներով՝ ներառյալ էլեկտրոնային փոստով, ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ բջջային հեռախոսների հավելվածներով), որոնք թույլ են տալիս հավաստիանալ հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու մասին» բառերը.

~~2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունում «առնվազն 21 օր առաջ» բառերից հետո լրացնել «, իսկ իրական ժամանակի ռեժիմում հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով կազմակերպվող ժողովի մասին՝ գումարման օրվանից առնվազն 7 օր առաջ» բառերը:~~

~~***Հոդված 3.*** Օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունից երկրորդ նախադասությունը հանել, և 1-ին մասի երրորդ պարբերությունում «հեռակա կարգով քվեարկությամբ» բառերից հետո լրացնել «կամ իրական ժամանակի ռեժիմում հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով քվեարկությամբ» բառերը:~~

Հոդված ~~4.~~3. Օրենքի 79-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունում «կամ հանձնվում են անձամբ» բառերից հետո լրացնել «կամ ուղարկվում են էլեկտրոնային կապի միջոցներով՝ ներառյալ էլեկտրոնային փոստով, ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ բջջային հեռախոսների հավելվածներով)» բառերը.

~~2) լրացնել նոր՝ 2.1-ին մաս.~~

~~«2.1 Իրական ժամանակի ռեժիմում հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով կազմակերպվող ժողովի քվորումի առկայության դեպքում ժողովին մասնակցելու համար գրանցված բաժնետիրոջը (նրա ներկայացուցչին) տրվում է էլեկտրոնային քվեաթերթիկ: Էլեկտրոնային քվեաթերթիկը բաժնետիրոջը (նրա ներկայացուցչին) ուղարկվում է, և լրացված էլեկտրոնային քվեաթերթիկն Ընկերության կողմից ընդունվում է էլեկտրոնային կապի միջոցներով՝ ներառյալ էլեկտրոնային փոստով, ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ բջջային հեռախոսների հավելվածներով):~~

~~Էլեկտրոնային քվեաթերթիկը պետք է պարունակի սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված բոլոր տեղեկությունները, բացառությամբ ե) և զ) կետով նախատեսվածների:»:~~

~~***Հոդված 5.*** Օրենքի 87-րդ հոդվածի 1-ին մասի վերջին նախադասությունը հանել, և 1-ին մասը լրացնել նոր՝ երկրորդ պարբերություն.~~

~~«Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով: Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ՝ ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:»~~

Հոդված ~~6.~~4.

~~1.~~ Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020 թվականի նոյեմբերի~~ին~~ 1-ը Բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով՝ անկախ Ընկերության կանոնադրությամբ նման հանարավորություն նախատեսված լինելու հանգամանքից: Ընդ որում նման նիստի կազմակերպիչը սահմանում է նիստի անցկացման ու քվեարկության ընթացակարգ, որը պետք է ապահովի բաժնետերերի շահերի պաշտպանությունն ու պատշաճ՝ սույն օրենքի դրույթներին համապատասխան քվեարկությունը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Փաստաթղթային կոդ՝ Կ-536-29.03.2020-ՏՀ-011/1) ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկությանն վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 1 1-ին մաս	«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի 69-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «1. Ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց օրակարգի հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով ընկերության մասնակիցների համատեղ ներկա	Ընդունվել է	Ընդունվել է

			գտնվելու՝ հեռակա կարգով քվեարկության (այդ թվում՝ առցանց քվեարկության) միջոցով: Հեռակա կարգով քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կապի՝ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը հավաստող և հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու փաստի հաստատման հնարավորություն տվող միջոցներով փոխանակելու եղանակով: »:		
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 1 4-րդ մաս	2) 4-րդ մասում «առնվազն 30 օր առաջ» բառերից հետո լրացնել նոր նախադասություն. «Էլեկտրոնային, հեռատիպային կամ հեռախոսային կապի միջոցներով ժողովի անցկացման քվեարկության դեպքում քվեաթերթիկները (այդ թվում՝ էլեկտրոնային քվեաթերթիկները) պետք է տրամադրվեն բաժնետերերին ժողովի անցկացման պահից առնվազն 7 օր առաջ:»:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	Հոդված 1 5-րդ մաս	3) 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:	Ընդունվել է	Ընդունվել է

4.	ՀՀ կառավարություն	Հոդված 2. Օրենքի 71-րդ հոդված 1-ին մաս	Հոդված 2. Օրենքի 71-րդ հոդվածում 1) 1-ին մասի երրորդ պարբերությունում «անձամբ հանձնելով» բառերից հետո լրացնել «կամ էլեկտրոնային կապի միջոցներով՝ ներառյալ էլեկտրոնային փոստով, ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ բջջային հեռախոսների հավելվածներով), բառերից հետո ավելացնել «որոնք թույլ են տալիս հավաստիանալ հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու մասին» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	ՀՀ կառավարություն	Հոդված 2. Օրենքի 71-րդ հոդված 2-րդ կետ	2)-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	ՀՀ կառավարություն	Հոդված 3.	Ուժը կորցրած ճանաչել:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	ՀՀ կառավարություն	Հոդված 4-ը դարձնել հոդված 3	2)-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	ՀՀ կառավարություն	Հոդված 5	Ուժը կորցրած ճանաչել:	Ընդունվել է	Ընդունվել է

9.	ԱԺ տնտեսական հարցերի շտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյան	Հոդված 6-ը դարձնել հոդված 4	Հոդված 4-ում ավելացնել 2-րդ մաս նոր խմբագրությամբ. 2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020 թվականի նոյեմբերի 1-ը Բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով՝ անկախ Ընկերության կանոնադրությամբ նման հանարավորություն նախատեսված լինելու հանգամանքից: Ընդ որում նման նիստի կազմակերպիչը սահմանում է նիստի անցկացման ու քվեարկության ընթացակարգ, որը պետք է ապահովի բաժնետերերի շահերի պաշտպանությունն ու պատշաճ՝ սույն օրենքի դրույթներին համապատասխան քվեարկությունը:	Ընդունվել է	Ընդունվել է